

ԾԱՂԻԿ

ՄԱԿԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Դաստիարակութեան եւ Կրթութեան

ԾԱՂԻԿ ՄԱԿԱՆ. Յք կը հրատարակուի ամէն ուրբար օր, ի բաց առեալ Յունիս եւ Յուլիս ամիսները, Բաժանողազինն է ԿԱՆԴԻԿ, Պօլոյ եւ գուառաց համար, տարեկան 50 դահեկան . Վեցամսեայ՝ 25 դահեկան, եռամսեայ՝ 15 դահեկան . Այլ Երկար համար 12 մրանք . Խրախանչիւր թիւր կ'արժէ 50 փարա, Գաւառներէն դրումարուղը ալ կ'ընդունուի : Բաժանողագրութեան համար դիմել առ Տնօրին—Խմբագիր Միհրան Ավանազ, Եսկի Զապրիէ նաստէսի թիւ 61, Նշան Կ. Պետքենանի տպարանը :

ՏԱՐՐԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ

•••••

ՆՈՐ ՀՆԹԱՑՔ

ՄԻԹՈՉԱՆ ՊԵՏՄՈՒԹԵԱՆ

Թարոյական հանգամանք իրադարեանց

Ոչ ոք կրնայ ուրանալ պատմութեան օգտակարութիւնը : Այնու կը կարդանք անցեալը կամ մանաւանդ այնու չիք անցեալ : Մեր աշաց առջեւ կը վերակենդանացնէ այն անձերն որք երկար ժամանակներէ հետէ իջած են ի գերեզմանն, և գողցես վկայ կ'ընէ զմեզ այն դէպքերուն որք իրարու յաջորդած են և այն իրողութեանց որք դարերէ ի վեր կատարուած :

Բայց պատմութիւն ըսելով պէտք չէ միայն դէպքերու ծանօթիւնը հասկնալ . կը ռնանք ըսել թէ այս ծանօթութիւնը պատմութեան երկրորդական մասն է : Արդարեւ ի՞նչ օգուտ պիտի ունենար մեզ ծանօթանալ գիւցազանց քաջութեանց, եթէ այս ծանօթութիւնը միայն ամուլ զարմանք մը յառաջ բերէր ի մեզ : Ի՞նչ օգուտ պիտի ունենար մեզ տեղեակ ըլլալ գեղեցիկ գործոց

և առաքինութեանց մեծ մարդոց եթէ իրենց օրինակը չձնուցաներ ի մեզ իրենց նըւմանելու փափագը :

Վերջապէս ի՞նչ օգուտ է մեզ խելամուտ ըլլալ ազգաց և ժողովրդոց յաջորդութեանց և նոցա ընկերական վիճակին փոփոխութեանց, եթէ չգիտնանք իրական օգուտ մը քաղել կամ հետեւութիւն մը հանել բաղդատելով այն դէպքերն և իրողութիւնները :

Այս վերջին տեսակէտով մանաւանդ պատմութիւնը կրթութեան կարեոր մէկ մասը կ'ըլլայ : Ամէն դէպքի, ամէն իրողութեան առջեւ աշակերտը, դասատուին միջոցաւ, պարտի ընել իւր գնահատումը, իւր դատաստանը, իւր խորհրդածութիւնը, ի մի բան, դովել զբարին և դատապարտել ըզչարն :

Այսպիսի ուսում մը մասամբ իւրք պատմութեան իմաստասիրութիւնը կ'ըլլայ, զոր մէք պիտի կոչենք աւելի համեստ անուամբ, բարոյական հանգամանք իրողութեանց :

Մեր տեսութեան առարկայն պիտի ըլլայ մի միայն այս բարոյական հանդամանքը՝ Արբազան Պատմութեան այս ընթացքին մէջ : Իցիւ թէ յաջողէինք բողբոջեցնել հայ

մատաղ սրտերու մէջ բարւոյն տենչը , եւ
օգտակար ըլլալ ուսուցչաց և ուսուցչուհի-
եաց :

ԱՌԱՋԻՆ ԴԱՍ

ՍՈՒԵԴՈՒՄԲ աշխարհի

Ուսուցիչ . Տղա՛ս , պատմէ ինձ աշխարհի-
ստեղծումը . ինչ որ Աստուած ստեղծեց իւ-
րաքանչիւր օր :

Աւակերս

Ուս . Սուեդել կը նշանակէ ոչնչէն բան
մը յառաջ բերել : Դուն , տղա՛ս , կրնա՞ն բան
մը ստեղծել :

Ա. Ոչ :

Ուս . Գիտեմ , տղա՛ս , դու տակաւին կը ր-
թութիւն ստացած չես . բայց մարդիկ կա-
րող չե՞ն բան մը ստեղծել :

Ա. Ո՛չ . մարդիկ իրենց բոլոր հանձարու-
կ գիտութեամբ բնաւ բան մը ստեղծած չեն .
միայն հնարել գիտեն անոնք :

Ուս . Ի՞նչ կը հետեւցնես աստի :

Ա. Կը զարմանամ Աստուծոյ կարողու-
թեան վրայ , որ ոչնչէն ստեղծեց բնու-
թեան բոլոր հրաշալիքները և կը բաշ-
դատեմ այս կարողութիւնը մարդուն տկա-
րութեան հետ որ չկրնար ինքն իրմէ բան մը
շինել :

Ուս . Որո՞ւ համար ստեղծեց Աստուած
այս բոլոր բաները :

Ա. Մարդուն համար , ուստի պիտի յայտ-
նեմ նմա իմ երախտուգիտութիւնս իւր ա-
նոսառ բարեաց համար :

Ուս . Այս ստեղծագործութեան մէջ որ կը
տեւէ վեց օր , այս եօթներորդ օրուան հան-
գստեան մէջ , օրինակ մը չե՞ս տեսներ ,
տղա՛ս :

Ա. Այս' , բարին Աստուած մեզ ամենուս
ցոյց տուաւ որ պարտինք աշխատիլ վեց օր ,
բայց եօթներորդ օրը պարտինք հանգչիլ և
նուիրել այս օրը իւր պաշտաման : Ուստի
չպիտի մոռնամ որ կիւրակէն Աստուծոյ է
և զայն իրեն պիտի նուիրեմ :

Ծանօթ . — Ուսուցիչը պարտի բացատրել
ասութիւ օր բառը կը նշանակէ ծախնակ ,
դպրագլուխ : — Պարտի բառը թիւ Մովսէսի
պատմութիւնը և մարդկային գիտութիւնը
համաձայն են իրարու և թէ ըստը անկախ
է Արեգակին , այսինքն թէ լուսեղին դո-

յացութիւնը՝ լուսաւոր մարմինէ ազատ եւ
անկախ գոյութիւն մ'ունի . որպէս զի կա-
րենայ բացատրել Աստուածածունչ գրոց Ա-
ռաջին օրը ստեղծեց լոյսը . . . : Զարորդ օրը
արեգակը խօսքերը :

ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍ

ՍՈՒԵԴՈՒՄԲ մարդոյ

Ուս . Պատմէ մարդուն ստեղծումը , —
կնոջ : — Խօսէ դրախտին մէջ իրենց ունե-
ցած երջանկութեան վրայ :

Ա.

Ուս . Քանի՞ մասերէ կը բաղկանայ մարդը .
Ա. Երկու մասերէ . մարմինէ և հոգիէ :

Ուս . Այս երկու մասերէն ո՞րն աւելի
պատուական է , և ինչո՞ւ համար :

Ա. Հոգին պատուականազ ոյն է որովհե-
տեւ Աստուած զայն իւր պատկերին նման
ստեղծեց :

Ուս . Այս , տղա՛ս , մեր հոգին շատպատ-
ուական է . նա Աստուծոյ չունչն է և ան-
մոհ :

Ընդհակառակն մեր մարմինը երկրիս
հողէն շինուած է և ի հող պիտի գտանայ :

Սակայն տիսուր է ըսել զի մարմինը՝ որ մեր
գոյութեան մէջ երկրորդական տեղ մը կը
գրաւէ և որ սպասաւորն է հոգւոյն , իբր
աւր յաճախ կը հրամայէ նմա և կը նուածէ
զայն . դու , բարեկամն , գիտցիր պահելո-
նոր գերազանցութիւնը . և մի' երեկք գերի
ըներ զայն որ պարտի գշխոյ ըլլալ :

Եթէ քո հոգին Աստուծոյ պատկերին է ,
ի՞նչ կը հետեւցնես աստի :

Ա. Պարտաւոր եմ աշխատելու ճոխացնել
զայն առաքինութեամբ քո պատեցնեմ
զայն իմ երկնային օրինակին . պարտիմ աշ-
խատիլ ըլլալու բարի , արդար , բարեկամաց
և խորչիլ այն ամէն բանէ որ կրնայ ազու-
ղել զայն , և որ անարժան է իմ ազնիւ-
ծագմանս :

Ուս . Տղա՛ս , երբ տեսնես մուրացիկ մը
թշուառութեան ցնցուեօքը ծածկուած ,
արհամարհանօք մի' երեսդ գարձներ . օգ-
նութեան ձեռն կարկամէ , բարեկամ գէմք
մը ցուցուր նմա . որովհետեւ քո եղայրն է
նմա , և իւր հոգին , ինչովէս քուկդ , ստեղծ-
ուած է Աստուծոյ պատկերին նման :

Քիչ մը յառաջ ինձ ըսիր թէ դրախտին
մէջ մեր նախածնողք երջանիկ էին . որովհե-
է Արեգակին , այսինքն թէ լուսեղին դո-

տեւ անմեղ էին : Ի՞նչ կը հետեւցնես առաջի :

Ա. Երջանկութիւնը կը գտնուի միայն
բարի խորհմանիքի մը խաղաղութեան մէջ
երջանիկ ըլլալու համար պիտի ապրիմ ան-
մեղութեան մէջ և ոլիտի խորչիմ սամէն մեղ-
քէ :

४५

ԿԱՐՏԻՆԵՐ. Մ. Ա. ԹՐԱՆԱԶ

Հետեւղութեամբ Օիորդ Փիւրանվիլի

անոր մէջ, եւ որովհետեւ քսան եւ չորս
ժամուտան մէջ գրեթէ քսան հազար անդամ
վեր կ'ելնէ կուրծքը. միջին հաշուող տար
հազար լիսր ոլ կը ծծեմք մէկ աւուր մէջ:

Բայց ամենն այս չէ։ Մարդ մը, ու և է
կենդանի մը, միմիայն իւր կրծոց մէջ օդ
մոցնելով չէ որ կը չնչէ։ այլ կը չնչէ նաև
մորքով։ Մորթը, թռոքերուն պէս, կը ծծէ
օդ որուն պէտք ունի կենդանին ապրելու
համար։

Ապացոյց մը կ'ուզէ՞ք : Երբ գորտի մը
թռքերը հանենք, խեղճ անասունը կ'ապրի
դարձեալ . քանի կը չնչէ մորթով : Ահա
ուրիշ փորձ մը որ նոյնտափ ապացուցական
է . եթէ կենդանւոյ մը, եղան մը մարմինը,
զոր օրինակ, խայծղանով օծենք, օդոյ պա-
կասութենին ցոյց կուտայ խեղդուելու նը-
շաններ, հետզհետէ կը պաղի, և վերջապէս
կը մեռնի . թէեւ կարող է չնչել բերնով։
Պատճառն այն է որ իւր խայծղանեալ մոր-
թըն այլ ես չէ կարող օդ ծծել, և իւր
թռքերը չեն հայթայթեր բաւական օդ իւր
կենաւ պահպանման համար :

Սյս բանը ցոյց կուտայ թէ առողջութեան համար ո՞րչափ անհրաժեշտ է որ մորթն ըլլայ միշտ մաքուր, միշտ քափանցական որպէս զի կարող ըլլայ միշտ չնշել,

Ուրեմն մենք կը չնչենք թոքերով եւ
մորթով. հասկցանք զայս. Բայց ինչո՞ւ կը
չնչենք :

կը շնչենք որպէս զի օդոյ տարրերէն
մին, բռուածին, առնումք:

Այս թթուածինը բացարձակապէս պէտք է մեռ։ Վարդիկեան մ' հսկ չենք իսպան առ-

բայց վերջապէս, ի՞նչ գործ կը կատարէ
թթուածինը մեր մարմնոյն մէջ : — Սրբան
հետ իս խանու և և իս առածու և մասմ

զար զը բառաւուր և զը անդասուր սար-
մայն ամէն մասանց մէջ՝ վիտսելու համար
նիւթ մը զոր լաւ կը ճանչնաք գուք :—ա-
ծուլս :

—Մեր մարմնոյն մէջ ածո՞ւխ կայ ուրեմն :

— Այս , անտարակոյս : Ածուխ կայ մեր
կերակուրներէն շատերուն մէջ , ամէն պա-
րաբա նիւթոց մէջ , ինչպէս են . կարագ
ձէթ , ձմբալ , սեր . ալիւրին մէջ , շաքարին
մէջ դինիին մէջ : Այսպէս ամէն օր առ նր-

ԱՐԴՅԱՔԱՆՈՒԹԻՒՆ (1)

一〇

ԵՐԿՐՈՒԴ. ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ԵՇԽՎԵՆ ԱԼԻՄ Է ՀՏԻԵԼ

Այս առաւօտ, երբ զրոյանքի համար դասարանէն դուրս ելանք, մոռցեր ենք պատուհանները բանալու՝ որպէս զի օդը փոխուեր: Քիչ մ'առաջ՝ երբ ներս մտանք, շուտով նշմարեցինք մեր մոռացում, դասարան մտանք թէ չէ՝ զգացինք որ օդը գար չահոտ էր:

Կրնա՞ք ըսել թէ ինչու գարշահոտ էր
օդը:

—Որովհետեւ գործածուած էր :

—ի՞նչ բանի գործածուած էր :

Գիտէք գուշք զայն . առաւաօտեան գասա-
ժամուն գործածուած էր մեր ընչառու-
թիան : Արդէն չնչուած օդ էր այն : Դեռ
նոր գաս առիք չնչառութեան վրայ , եւ
գիտէք թէ ի՞նչ բանի մէջ կը կայանայ շըն-
չառութիւնը : Բայց լաւ կը լայց որ ի միասին
վերստին անցնիմք այն գասին վրայէն եւ
կարծ ի կարծոյ ամփոփեմք այդ մասին ձեր
սորվածք : Ահաւասիկ համառաօտիւ :

Մարդն, ինչպէս ամէն կենդանի էակ
կը չնչէ. այսինքն ներս կը քաշէ այն օդ
որ ամէն կողմանէ կը շրջապատէ զինք:

Կուրծքով է, թոքերով է որ կը չնչեմք անոնցմով է որ կը ծծեմք մեծադոյն մասն այն օդին որ անհրաժեշտ է մեր կենաց :

Եւ որչա՞փ օդ կը չնչե՞նք արդեօք : Դըժ-
ուար չէ հաշուելը : Ամէն անգամ որ կուրծ-
քը վեր ելնէ , կէս լիտրի չափ օդ կը մտնէ


ւազն 250 կրամ ածուխ կը կլնենք :
Թթուածինը՝ զոր կը չնչենք՝ արեան հետ
կը ճամբորդէ մեր մարմնոյ մէջն և կը
հանդիպի ածուխին զոր կերած եմք :

Թէ ի՞նչ կը պատահի յայնժամ, գիտէք
դուք : Վառարանաց մէջ ինչ որ կը պատա-
հի մի՛շտ նոյնը կը պատահի մեր մարմնոյ
մէջ : Թթուածինը կ'այրէ այդ ածուխը ,
այսինքն ուժգնապէս կը միանայ անոր հետ
և յառաջ կը բերէ սաստիկ ջերմութիւն :
Ահա ասոր համար է որ , եթէ ձեռքերնիդ
դնէք մարդու մը , ո և է կենդանւոյ մը
մորթին վրայ՝ տաքութիւն կ'զգաք : Այս
տաքութիւնն է ա'յն տաքութիւն զոր յա-
ռաջ կը բերէ ածուխն որ կ'այրի կենդան-
ւոյն ներքին կողմը :

Մարդն , ինչպէս ամեն կենդանի , տեսակ
մը վառարան է ուրեմն : Այս կրակը , այս
այրումը , նոյն իսկ կեանքն է . եթէ այն
դադրի՝ մեր կեանք ևս կը դադրի : Կերա-
կուր ուտելով ածուխ կը մատակարարենք
մեր վառարանին : Շնչառութեամբ կը վր-
չեն կրակը . թթուածնի հոսանք մը կը
դրկենք այն թանկագին կրակարանին վրայ .
եթէ այդ կրակ մարի , կը մեռնինք : Ձեր
ծնած ատեն , երբ ձեր փոքրիկ կուրծքն
բարձրացաւ եւ ուռեցաւ առաջին անգամ ,
ձեր կենաց վառարանը բռնկեցաւ յայնժամ .
որ կը վառի հիմա , և այսպէս պիտի վառի
մինչեւ այն վայրկեանն յորում կամայ ա-
կամայ պիտի թողունք որ նուազի , յետոյ
մարի , այսինքն մինչեւ այն վայրկեանն յո-
րում պիտի մեռնիք : Մաղթենք որ կարելի
եղածին չափ ուշ հասնի այդ վայրկեան . և
ասոր համար սորվինք թէ ի՞նչպէս պէտք է
հրահրել այս նուիրական հուրը , եւ թէ
ի՞նչպէս կարելի է ամէն օր մատակարարել
նմա տասը հազար լիոր մաքուր օդ :

(Եարունակելի)

Գ. Ա. ՄԱԼԱՅԻՆ



ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

—

ՄՏԱԿԱՐԱՐ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ (1)

Շարունակելով ճամբանիս գէպ ի հիւ-
սիս , մեր ճախս կողմը կը մնան Քեֆալնիս ,
Թէաքի կամ Իթակէ որու Ողիսես խորա-
մանկ թագաւորին հնարագիտութեամբն՝
Յայնք յաջողեցան Տրոյա քաղաքն առնուլ :

Ահաւասիկ Սրդայի ծոցն ուր կը թափի
համանուն գետը՝ Եւրոպական Թուրքիոյ և
Յունաստանի սահմաննեն անցնելով : Դուրս

(1) Տես Թիւ 1, 2

ելնեմք այս ծոցին և ահա կրկին կը տես-
նեմք Եւր . Թուրքիան որոյ այս մասն կը
կոչուէր Եպիրս հին ատեն , իսկ արդի բա-
ժանման անունն է՝ Էտանեա վիլայէթի :
Անցնինք Օդրանդի ջրանցքէն և մտնելով
Ագրիական ծով՝ կարգաւ ցոյց տանք գըլ-
խաւոր նաւահանգիստները : Բրէքվզա որ է
Եպիրսի կարեւորագոյն և բանուկ նաւա-
հանգիստը . ասկից շարունակելով գէպ ի
հիւսիս կ'անցնիմք Քորֆուի առաջէն և կը
տեսնեմք Կլօսսա հրուանդանը , Վալօնա
նաւահանգիստը , ապա Տրազ կամ Տուրաց-
ցո և ահա կուգամք Գարատազ կամ Մոն-
թէնէ կրօ՝ որ թարգմանի Սեւ լու : Գիտէք
թէ անբեր ու լեռնային երկիր մէ՛ Գարա-
տազ , իսկ իւր բնակիչներն խիստ նշանա-
ւոր իրենց կորիծութեամբ և աշխատափրու-
թեամբ : Գարատազ երկու գլխաւոր նաւա-
հանգիստ ունի Տուչինո և Անդիվարի :
Հասանք , Պարոններ , Աւատրիոյ սահմանը եւ
կը գտնուիմք Տալմացիական կամ Դալմատ-
եան արշակեղագոսի մէջ : Դէպ ի հիւսիս ,
յաջորդարար կը տեսնեմք Ռակուզա , Զա-
ռա , Ֆիումէ և Խոթրիոյ թերակղղւոյն հա-
րաւակովը Բօլա պատերազմական և առե-
տրական նաւահանգիստները : Շարու նակե-
լով ճամբանիս՝ կուգամք ի Թրիէստէ : Գի-
տէք , Պարոններ , թէ Աւատրո . Հունգարա-
կան կայսրութիւնն համեմատութեամբ իւր
ընդարձակութեան՝ ամենէ նուազ ծով աես-
նող կրկիրն է Եւրոպիոյ մէջ : Թրիէստէ թէ
Աւատրիոյ և միանգամայն աշխարհիս ամե-
նէ բանուկ և վաճառաշահ նաւահանգստաց
մին է : Առետրական ընդարձակ և կարևոր
յարաբերութիւններ ունի երկրիս ամէն
կողմանց հետ : Բնակչաց թիւն է 460.000 :
Կ . Պոլիս Թրիէստի հետ կանոնաւոր յարա-
բերութիւն ունի Լոյտի ընկերութեան սուր-
հանդակ շոգենաւուց միջոցաւ :

Ճամբայ Ելնենք Թրիէստէն և Ագրիակա-
նի հիւս . ծովեզրն քերելով՝ կը մտնեմք ի-
տալիս :

Ահաւասիկ , Պարոններ , հասանք ի ՏԱԼԻԱ :
Առաջին նշանաւոր քաղաքն զոր կը տես-
նեմք , Վենետիկ կամ Վենեցիան է : Գիտէք
թէ՝ Թագուհի Ադրիականի կոչուած այս
զմայլի քաղաքն՝ 380 կամուրջներով իրա-
րու միացած 400ի չափ կղղեակներու վրայ
շնուռած է : Վենետիկ հիմնուեցաւ Միջին
Դարու սկիզբներն՝ Հոնաց արշաւանքին

ժամանակ։ Ո՞վ ՚ընար գուշակելթէ՝ ճախ-
ճախուտ և ամայի այն կղզիներն՝ օրին մէ-
կը աշխարհիս ամենասիրուն և մեծագործ
քաղաքաց մին պիտի լինէր։ Եւ տակաւին
երբ կարդայք Միջին Դարու և նոր ժամա-
նակաց պատմութիւններն՝ պիտի տեսնէք

թէ Վենետիկ՝ իրեւ առանձին Հասարակա-
պետութիւն և իւր ընակիչքն՝ իրբեւ ծովա-
յին ու վաճառական և ողովուրդ ի՞նչ մեծ
դեր կատարած են։ Այս քաղաքին մէջ ե-
րեւի են Ս. Մարկոսի եկեղեցին ու հրա-
պարակն, Գրատունը, Հնութեանց թան-
գարանները, Դեղաբուեստից համալսարանը
ևն։ Կը յիշէք անշուշտ թէ՝ այս կղզեաց
միոյն՝ Ս. Ղազարի մէջ է Միխիթարեան Հարց
վանքը, տպարանն ու մատենադարանն։
Այս Միխիթարեան Հարց մէծ ու գնահատե-
լի ծառայութիւններ մատուցած են Հայ
լեզուի և Գրականութեան։ Միխիթարեանց
այժմու նշանաւոր անձնաւորութիւնն է
Հայր Ղեոնդ Ալիշան՝ հռչակաւոր հայրենա-
գէտն ու բանաստեղծն որ իւր անունն ու
Հայ պատմութիւնն անմահացնող գրական
հրաշակերտներ հրատարակած է։

Վենետիկ միանգամայն ճարատրաբուեստ
ու վաճառաշահ նաւահանգիստ մ'է։ Երեւելի
են այս քաղաքին ապակին, ընտիր հայելի-
ները, բրդեղէն ու մետաքսեղէն կերպաս-
ները, պողպատէ, պղնձէ ու երկաթէ գոր-
ծուածքները։ Վենետիկ առեւտրական կա-
նոնաւոր յարաբերութիւն ունի Թրիէտի,
եւր Թուրքիոյ, Եգիպտասի, և իտալական
նահանգաց հետ։ Շարունակեմք ճամբանիս
դէպ ի հարաւ։ — Կ'անցնիմք Ատիճէ եւ
Բօ գետոց տէլդային առաջէն։ Աւրիշ ան-
գամ ձեզ ըսած եմ թէ՝ Բօ գետին բերնին
մօտ շինուած Ադրէա փոքր քաղաքին ան-
ուամբ կոչուած է Ադրիականը։ Յառաջա-
նանք. — Եւ ահա յաջորդաբար կ'անցնիմք
Նիօմիա, Ռիմինի, Բէսսարօ և Սինիկալիա
փոքր՝ ոյլ բանուէկ նաւահանգստաց առւա-
ջէն։ Այս քաղաքները կ'արտածեն աղ, ծը-
ծուամբ. մետաքս և մորթ. — նոյնպէս կ'ըզ-
քաղին ձկնորսութեամբ։

Ահաւասիկ Անքօնա՝ որ է Ադրիականի
փրայ իտալիոյ մեծագոյն ու վաճառաշահ
նաւահանգիստը և ուր կանոնաւորապէս
կ'երթեւեկեն Լոյտի ընկերութեան շոգե-
նաւք։ Անքօնա ունի 60,000 բնակիչ եւ
կ'արտածէ վուշ, մալուխ (հալտո), մորթ,

բուրդ, առագաստի կտաւ (եէլքէն պէզի)
և աղած ձուկ՝ տարեկան իբր 75,000,000
ֆր.ի արժողութեամբ։ Անքօնա գլխաւո-
րապէս վաճառականութիւն կ'ընէ Անգլիոյ,
Աւստրիոյ, Ֆրանսայի և արեւելքան երկ-
րաց հետ։

Շարունակելով ճամբանիս՝ կ'անցնիմք
լիւնային փոքր թերակղզւոյ մ'առաջէն որ
է Կառականօ՝ որու հարաւակողմը կը գտնուի
Մանֆրէտոնիս ծոցն ու համանուն քաղա-
քը։ Ասկից դէպ ի հարաւ յաջորդաբար կը
տեսնեմք Պաուլիթթա, Պաուի և մանաւանդ՝
Պունայիզի նաւահանգիստն որ տակաւ կա-
րեւութիւն ստանալու վրայ է. ինչու որ՝
արեւելքան նաւահանգիստներէ իտալիա ե-
կող թէ՝ վաճառաբարձ և թէ թղթատար
շոգենաւուց գլխաւոր կայանն ու երկա-
թուղեաւ ալ միացած է երկրին բոլոր երե-
ւելի քաղաքաց։ Ահաւասիկ Օդրանդ կամ
Օդրանդո՝ փոքր այլ բանուէկ նաւահանգիստ
որ կ'արտածէ ձէթ, թուզ և չամիչ. — Իւր
անուամբ կոչուած է այն ջրանցքն որ Ադ-
րիական ձովը Յոնիականի կը միացնէ։

Դառնանք էօքա հրուանգանը եւ մըտ-
նեմք Տարէնաօնի ծոցը. — կը տեսնեմք Կա-
լիփօլի՝ փոքր կղզւոյ մը վրայ շինուած նա-
ւահանգիստն ու Տարենտոն քաղաքը։ Ասի՝
Յոնիականի փրայ իտալիոյ գլխաւոր նաւա-
հանգիստն է և ունի ընտիր գինի։ Հա-
սանք, պարոններ, իտալիոյ հարաւային
դայրը (գլուխ Սրարթիվէնթօ) և ահա Մե-
սենայի նեղուցին անցնելով՝ ինքինքնիս
կը գտնենք Միջերկրականի մէջ։ Ստկան
միոքս բան մը կուգայ։ Կը յիշէք թէ Մե-
սենա անուամբ քաղաք մ'ալ Յունաստանի
մէջ տեսած եմք։

Արդ՝ եթէ Յունաց պատմութիւնը խնա-
մով ուսած և կրցած էք միտք պահել, ինձ
հետ գուք ալ պիտի յիշէք անշուշտ թէ՝
Լիկուրգոսի մահուանէ յետոյ՝ Սպարտացիք
Մեսենացոց դէմ (որք կը բնակէին Պելո-
պոնէսի արեւմտեան կողմը) երկու արիւ-
նալի պտուքրազմներէ յետոյ՝ վերջապէս տի-
րեցին անոնց երկրին։ Ահա այն ատեն խեզք
Մեսենացիք գողթեցին Սիկիլիա և հոն ի-
րենց հայրենի երկրին անուան յիշատակ՝
հիմնեցին Մեսենա քաղաքը։ Հիմայ՝ շա-
րունակենք ճամբանիս ադրիայինիս։ Նախ կը յիշէք թէ՝
Միջերկրականի այս մասն կը կոչուի նաեւ
Տիւրէնեան կամ Թոսուքանալի ծով։

Դէպի ի հիւսիս յառաջացած ատեննիս, մեր ձախ կողմը կը թողունք Լիպարեան կղզիները: Կը յիշէք, Պարոններ. թէ Հռոմայեցւոց ու Կարգեդոնացւոց միջև տեղի ունեցած ի՞նչ արիւնահեղ պատերազմաց ասպարէզ եղած են այս կղզիք:

Կարգաւ կ'անցնինք Վատիքանո գլխէն. Էօֆէմիա և Յօլիքասորո ծոցերու եղբէն և կուգամք Սալէոնյի ծոցը՝ որու խորը կը գտնուի համանուն քաղաքը: Սալէոնո ժամանակաւ նշանաւոր նաւահանգիստ էր. այսօր՝ անկարեւոր. ունի միայն մեծ տօնավաճառ: Կ'անցնիմք Կապոի փոքր կղզւոյն առաջէն և կը մտնեմք Նախօլիի ծոցը: Նախ և առաջ կը տեսնեմք Քամթէլամառէ զինուորական նաւահանգիստն որ ունի նաւարան, հանքային ջուրեր, մետաքսեայ եւ բամպակեայ ընտիր հիւսուածեզէնք: Եկանք Նախօլի որ է իտալական ցամաքակղզւոյն մեծագոյն քաղաքը և ունի 500,000 բնակիչ: Նախօլի ունի զուարձալի կլիմայ, հոյակապ Մայր Եկեղեցի, թատրոն, գեղարուեստից և նաւային վարժարաններ, հութեանց թանգարան, գրադարան և լւ: Իւր ձեռագործաց մէջ երեկի են՝ ժամաւէնք, մետաքսեայ ազնիւ կերպասները, թաւիչը, չուխան, յարդէ գլխարկը, երաժշտական գործիները, արուեստական ծաղիկները, ձեռնոցը, օճառը և լւ: Նոյնպէս ունի նաև համբաւաւոր խեցեզէն, անօթեզէն, թելահայս (ՀՀրիյէ, կամ լաւ ևս շուուուրիյէ) դդմած (մահառնա) գինի և լւ: Նախօլիի մօտըն է Վեսուվ հրաբուզին որոյ լավաներուն տակ ծածկուեցան Հերուլանում եւ Պոմպէա քաղաքներն Քիստոսի 79 թուականին՝ Տիտոս կայսեր օրով: Այս կայսրը տեսանք, Պարոններ, Հռոմայեցւոց պատմութեան մէջ: Կը յիշէք թէ՝ բարերա մարդկային ազգի կը կոչուէր իւր չքնարքարեմսանութեանցն համար: Աւելին կայ, օրս կորուսի Կըսէր երբ նոյն օրը առանց բարիք մ'ընելու անցնէր: Այլ ո'քափ գեղեցիկ էր իւր սա խօսքը՝ զոր իւեն նշանաբան էր ըրած—ԱՇԽԱՏԻՇՔ:

ԳՐԻԳՈՐ ՄԱՐԳԱՐԵԱՆ

Ուսուցիչ Պատմ: և Աշխարհագրութեան

(Տարունակելի)

ՄԻԶԻՆ ԸՆԹԱՑՔ

ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆ⁽¹⁾

ԲՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՅՈՒՄԲԵՐՈՒԹԻՒՆ ՆԱԽԱՒԱՍՈՒԹԱԾԱՑ

ԴԱՍ Ա. (Շար.)

ՍՈՀՄՈՅ ՆԱԽԱԳԱՍՈՒԹԵԱՆՑ. — ԵԿԹԱԿԱՑ, ԲԱՑ

ԵՒ ՍՅՈՐՈԳԵԼԻ

ՀՐԱՒԱԲ 4.

Աւակերը պարտի դիմաւոր ածական բայերը աւրարուծել, այսինքն սուրոգելին յերեւան բիրել:

(Աշխարհաբար) 1. Կ'աշխատիմ: 2. Կը ննջէ: 3. Կը յիշենք: 4. Կը նստիք: 5. Կուրախանան: 6. Կը զուարձանայինք: 7. Մեր դասը պատրաստեցինք: 8. Հնաղանդէ՛ դաստիարակիւդ և ծնողացդ: 9. Ճշմարտութիւնը պիտի սիրենք: 10. Հոգին մարմնոյն հետ չմեռնիր: 11. Մահը կը վախոնէ միայն չարերը. առաքինին կ'սպասէ նմա, զի չվախնար անտի: 12. Դիոգինէսի կը հարցնէին թէ ո՞ր բանը չուտ կը ծերանայ մարդոց մէջ. Բարերարութիւնը, պատոսիանեց: 13. Երբ Տիտոս անցունէր օր մը առանց բարիք գործելու. Բարեկամմք իմ, կ'ըսէր, երեկոյին. անոնց որք զինքը կը չրջապատէին, օրս կորանցուցի: 14. Եղբայրս պարտէ զն է: 15. Սենեկին մէջ հինգ հոգի էինք:

(Գրաբար) 16. Յորժամ զաներեւութէն և զնորին զիշտնչենաւոր զօրութենէն ճառիցէ ոք, քանզի մարմնաւորելեալ է, պարտի զմիսս յատակիւ եւ զիսորհուրդու սրբել, զյոյզս շարժմանց պարզել, զի յայն զոր առաջի երդ, հասանել կարասցէ: (Եղիթիլ): 17. Կարէր կենարարն առանց ջրոյ տալ թողութիւն մեղաց: (Սերեր): 18. Զկոտուերն կոչեաց մայրն ի Պեղուսիոս քաղաքէ, և կացոյց թագաւոր խառն ընդ իւր: (Եւս. Քր.): 19. Տիտոս ըզ Հրեայս պաշարեաց, զԵրուսաղէմ ի հիմանց բրեաց և վեց բիւր արանց կոտորեաց: (Նոյի): 20. Դատաւոր մի էր ի քաղաքի ուրեմն: (Ս. Գիրք):

(1) Տես թիւ 2:

ՈՒՂՂԵԱԼ

1. Աշխատով եմ: 2. Ննջող է: 3. Ցիսոլ
եմք: 4. Նստող էք: 5. Ուրախացող են: 6.
Զուարեացող էինք: 7. Մեր դասին կամ դա-
ռը պատրաստոյ եղանք: 8. Հնազանդ եղիլ
դասախալակիդ և ծնողաց: 9. Սիրող պի-
տի ըլլանք ճշմարտութեան: 10. Հոգին մար-
մոյն հետ մեռնող չէ կամ շնեռնող է: 11.
Մահը վախցնող է միայն չարաց. առաքի-
նին սպասող է նմա, զի լախցող չէ կամ
չվախցող է անափ: 12. Դիսդինէսի հարցու-
նող էին թէ ո՛ր բանը շուտ ծերացող է մար-
դոց մէջ. Բարեբարութիւնը, պատասխանող
եղաւ: 13. Երբ Տիտոս անցրուող րլլար օր
մը առանց բարիք գործելու. Բարեկամիք իմ,
ըսող էր, երեկոյին, անոնց որք զինքը ըրբ-
ջապատող էին, օրս կորսնցնող եղայ: 14.
Եղբայրս պարտէզը ներկայ է: 15. Մէնեկին
մէջ հինգ հոգի ներկայ կամ բնակող էինք: 16.
Յորժամ զաներութէն և զնորին զմշանջե-
նաւոր զօրութենէն ճառող իցէ ոք քանզի
մարմնաւոր լեալէ, պարտաւոր է զմիտույթս-
տուկել և զիսորհուրդու որբել, զյոյզու չարժ-
մանց պարզել, զի յայն զոր առաջի եղեալ
է, հասանել կառող իցէ: 17. Կառող էր կե-
նարարն առանց ջրոյ առալ թողութիւն մե-
ջաց: 18. Կրտսերոյն կոչող եղեւ մոյրն ի
Պեղուսիոս քաղաքէ, և կացուցանող թա-
գաւոր՝ խառն ընդ իւր: 19. Տիտոս ալա-
ւարող եղեւ Հրէից, բրող երուսաղէմի ի
հիմանց և կոռորիչ վեց բիւր արանց: 20.
Դատաւոր մի էր մօս կամ բնակեալ ի քա-
ղաքի ուրեմն:

(Ծարունակելի)

Մ. Ա. Ս. Գ. Ա. Ն. Ա. Զ.

ԸՆԹԱՑՔ ԸԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ

ԿՈՅՐ ՊԱՏԱՆՈՅՆ ՎԻՇԱՆ

ՅԱՏԱԿԱԳԻՒՑ

Կոյր պատանի մը կը թուէ հետ զինտէ
ինչ որ սոյք չ' ընդ իրեն ընութեան տեսա-
րանաց գեղեցկութեան վրայ, առաջապահն,
չարնան, ձուլու եւ երինչ ներկայացուցած զա-
նազան հիասքանչ երեւոյթներուն վրայ:

Պատանին նկարագրաբար կը կրկնէ ըստ
այլոց ինչ որ այս չորս խումբ երեւոյթք ու-
նին մասնաւրապէս զմայլելի եւ երապու-

թէ ի տեսննել, եւ ուրեք ուրեք, հատուա-
ծի մ' ի վերջ, ընդհատելով իւր նկարա-
գրութիւնը՝ կ' ըսէ. «Բայց զայսոսիկ չտեսնելս
չէ որ կը վշտացնէ զիս ա՛յնքան:»

Հուսկ ուրեմն կ' ամփոփէ եւ կը վերջա-
ցնէ յայսնելով թէ ի նշ քանի համար ամենէ
աւելի ցաւ կը պատճառէ ինքեան իւր կու-
րութիւն. — անո՞ր համար որ չէ կարող
տեսննել, ... իւր մօր դէմքը:

ԸՆԴԱՅՑՆՈՒՄՆ

Կ' ըսէն թէ քաղցր է տեսննել առաւոտն
երբ կը ծագի, այն շառագոյն պայծառու-
թիւնն որով արեւելք կը փայլին վառ ի վառ,
արեգական նախարձակ ճառագայթներն
որք կ' ոսկեզօծ են լերանց գագաթներն եւ
տաճարաց գմրէթքն, ու ցողն որ մարդա-
գետնին խստերուն վերայ կը շողայ մար-
դարատատիպ. — բայց զայսոսիկ չտեսնելս
չէ՝ որ կը վշտացնէ զիս ա՛յնքան:

Կ' ըսէն թէ գեղեցիկ է բնութիւնը գար-
նան մէջ, և թէ զմայլելի է տեսննել վարդն
որ կը բացուի իւր ծզօտին վերայ, տեսննել
ծառերն տերեւաղարդ պճնուած, գալարա-
գել գաշտն որոյ վերայ բազմագունեան ծա-
զիկք սփռուած են իրու կանաչ պատմու-
ճան մը գարդարող գոհարներ, ու գոյն-
գոյն թիթեռնիկներն որք՝ թեւաւոր եղ-
բարք ծաղկանց՝ կը թոշին օդոց մէջ կամ
հանդիսատ կ' առնուն իւրեանց անթե հարա-
զատաց գրկին մէջ. — բայց զայսոսիկ չտես-
նելս չէ՝ որ կը վշտացնէ զիս ա՛յնքան:

Կ' ըսէն թէ սիստալի է տեսարան ծովսւն,
— թէ՛ երբ ջրանցք մ' նա հանգոյն Վոս-
փորին ու իւր ալեաց բիւրեղին մէջ կը ցո-
լացնէ իւր եղերաց վերայ շար ի շար ա-
պարաններն ու բուրաստաններ, և թէ՛ երբ
ընդարձակ է նման Մարմարային ու կը տա-
րածուի անսահման և կ' երթայ հեռուն գըր-
կախառնիւ երկնից հետ. թէ՛ ցերեկ ատեն
ուր արեւուն ճառագայթից տակ կը փալ-
փլի լուսափայլ իբր հալած ոսկի, և թէ գի-
շեր ժամանակ ուր իւր մեղմածուփ ծոցոյն
մէջ կը նիրհէ շողն աստեղց ու լուսնեկին.
թէ՛ իւր հանդարտաւթեան մէջ՝ երբ նման է
միապաղատ հայելոյ, և թէ՛ երբ մրկայոյզ
կը խոսվի, կը մանչէ զայրագին. ու կոհակք
լունակուտակ կը փրփրին իրեւ երկայնա-
բաշ ամենի երկվարներ, և ծովեղեր ապա-
ռաժներուն վերայ կը յարձակին մրմւա-

գին. — բայց զայսոսիկ չտեսնելս չէ՛ որ կը վշտացնէ զիս ա՛յնքան:

Կ'ըսեն թէ յափշտակիչ է տեսիլ երկնից, կը վերացնէ զմարդ և վսեմ խորհրդոց մէջ կ'ընկղմէ մարդկային միտքն, — թէ՛ երբ արևն՝ իբրեւ արքայ մը փառաշուք իւր պետութեան մէջ՝ կը պտուի անդ լուսահեղ ճառագայթարձակ, թէ՛ երբ կը մթագնի ամպոց քօղի մը ներքե զոր փայլատակունք և շանթք կը պատառեն ահաւոր կերպիւ, և թէ՛ երբ, յետ արեգական ի մայրն մտանելոյ, աստեղք կը փթթին անդ իբրեւ երկնային ծաղիկներ, կամ կը կախուին անտի իբր մէկ մէկ կանթեղներ, և կամ իբրեւ նաժիշտներն լուսնին կը փութան շուք դընել գիշերաց թագուհւոյն որ, այն պահուն արեւելքէն ելնելով, կուգայ նազելակայլ ճեմել եթերի դաշտաց մէջ՝ ամպերու բարակ շղարչ մը ճգած ճակտին և աչերէն արձակելով մեղմիկ նշոյլներ. — բայց զայսոսիկ չտեսնելս չէ՛ որ կը վշտացնէ զիս ա՛յնքան:

Ինչ որ առաւելքան զամենայն վիշտ կուտայ սրտիս և կ'զգացնէ ինձ կոյր ծնած վինելու դժբախսութեանս մեծութիւնն, այն ո՛չ առաւոտն, ո՛չ գարունն, ո՛չ ծովն և ո՛չ երկնքն դիտելու հաճոյքէն զրկումն է, այլ այն է զի, ա՛հ, չեմ կարող տեսնել անոյշ մօրկանս երեսը . . . :

Թ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԸՆԹԱՑՔ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՈՃՈՑ

Դ Ա Ս Բ.

ՄԵԴԱԿԻՆ ՈՒ ՃԱՆՃՐ

Օր մը Մեղու մ'իր փեթակին քով ձանձ մը կը տեսնէ. — Ի՞նչ ընկել կուգաս հոս, կ'ըսէ անոր կատաղի ճայնով մը: Սրգարեւ, քե՞զ միացեր է, գճուծ կենդանի, խառնուիլ օդոյ թագուհեաց հետ: — Իրաւունք ունիս, պատասխանեց անոր ձանձը պազութեամբ, մարդ միշտ կ'անիրաւի, ձերինին պէս կատաղի ազգի մը մօտենալով: — Բնաւ և ոչ մէկ ազգ մը կրցաւ մեր իմաստութեան հաւասարիւ, ըստ Մեղուն մեք մի-

այն եմք որ օրէնք և յոյժ բարեկարգ հասարակապետութիւն մը ունինք. մեք անուշահստ ծաղիկներ միայն կը ճարակենք և կը շինենք մեղր հեշտահամ որ նեկտարին կը հաւասարի: Կորիր առջեկս, չքոտի և ճանձրալի ձանձ, որ ուրիշ բան չես ըներ բայց միայն կը բզզաս և կերակուրդ աղքերուն վրայ կը փնտուես: — Մեք այնպէս կ'ապրինք, ինչպէս կրնանք. պատասխանեց ձանձը աղքատութիւնը մոլութիւն մը չէ, բայց բարկութիւնը մեծ մոլութիւն է: Դուք կը շինէք մեղրը որ քաղցր է բայց ձեր սիրառ միշտ դառն է: Դուք իմաստուն էք ձեր օրինօք, բայց ձեր վարուք խիստ մոլի: Զեր բարկութիւնը որ կը խայթէ ձեր սուխները, ձեզ մահ կը պատճառէ, և ձեր յիմար անգիտութիւնը ձեզ աւելի չարիք կը հասցունէ քան այլոց: Լաւագոյն է նուազ չքեղբարեմասնութիւններ ունենալ և աւելի համեստ լինել:

ՖԵՆԵԼՈՆ

Համառօտ բովանդակուրիւն. — Մեղու մը ձանձ մը տեսնելով իւր փեթակին քով, հըպարտութեամբ և արհամարհանօք կը խօսի անոր հետ: Ձանձը կը ճանչնայ իւր վիճակին խոնարհութիւնը, բայց իրաւամբ կը մեղագրէ Մեղուին բարկութիւնը և տմարդութիւնը:

ԼՈՒԾՈՒՄՆ ԳՐԱԴԻԺԱԿԱՆ

1. ԱՅՃԻԲԻ, Ժամանակ և տեղ

Այս առակին անձերը ո՞յք են: — Մեղու մը և ձանձ մը:

Իրողութիւնը ո՞ւր կը կատարուի: — Փեթակի մը քով:

2. Խօսի և գործ

1. Մեղուն ի՞նչ ընդունելութիւն կ'ընէ ձանձին: — Բարկութեամբ և արհամարհանօք կը խօսի անոր հետ:

2. Ճանձը իրաւունք կուտայ Մեղուին: — Պազութեամբ կը յանդիմանէ զՄեղուն բարկանալուն համար:

3. Մեղուն ի՞նչպէս կ'ընդունի ճանձին խօսքերը: — Զափազանց կը պարծենայ, և սոստիկ կ'անարգէ ձանձը:

4. Ճանձը կ'ուրանայ մեղուին գերազանցութիւնը: — Աչ բայց կը ցուցնէ Մեղուն գառնութիւնը և բարկութիւնը որ կը նսեմացնեն անոր բոլոր գեղեցիկ յատկութիւնները:

3. ԱՐԴԻՎԵՐ

Ում պէտք է իրաւունք տալ, ձանձի՞ն
թէ Մեղուին: — Ձանձին որ միայն համեստ
և խելացի կ'երևայ:

Բարոյական

Այս առակը ի՞նչ խորհիլ կուտայ մեղ: —
Խորհիլ կուտայ թէ բարկութիւնը յաճախ
կը վնասէ մեր պատույն, գործել և խօսել
տալով մեղ հակառակ համեստութեան և
պատշաճից:

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

1. Ի՞նչ է փեթակը: — Մեղուներուն
բնակարանը:

2. Փեթակը ի՞նչ հոմանիշներ ունի: —
Մեղուարյն . մեղուանոց . մեղուոց:
3. Մեղուին նախատալից խօսքերը զորս
ինքն կ'ուղղէ ձանձին և ինքզինքը քագունի
կոչելն, ի՞նչ թէրութիւններ նշմարել կու-
տան իւր վրայ: — Բարկութիւն և հպար-
տութիւն:

4. Ձանձին տուած պատասխանը առ Մե-
ղուն բառական ճշդութեամբը հասկնալու է
— Ոչ, Մեղուին կը պատասխանէ հեգնա-
կան ձեռվ մը:

5. Հասարակապիտուրեան հոմանիշ մը
գտէք: — Ընկերհաշտութիւն:

6. Ի՞նչ է նեկտարը: — Դից ըմպելին
էր ըստ առասպելին . փոխարերութեամբ
այս բառը կրնաց տրուիլ նաև ամէն ընտիր
ըմպելեաց:

7. Ի՞նչ է բզզալ բային գոյականը: —
Բզզիւն:

8. Երկու հոմանիշ գտէք բզզալին: —
Տզզալ, ձենձերալ:

9. Մենք այնպէս կ'ապրինք, ինչպէս որ
կրնակ, խօսքը՝ ձանձին վրայ ի՞նչ յատ-
կութիւններ կը ցուցնէ . . . Համեստութիւն,
պարզութիւն:

10. Ձանձին Բ. պատասխանւոյն մէջ քայց
շաղկալին երեք անդամ գործածութիւնը
ի՞նչ ազդեցութիւն կ'ընէ մեզ: — Այս կրի-
նութիւնը կը դարձնէ մեր ուշադրութիւնը
այն թէրութեանց վրայ զորս յատաջ կը բե-
րեն մեղուներուն նկատմամբ:

11. Ի՞նչ կը կոչուի մեղուներուն խայ-
թելու գործիքը: — Խոյթոց . խոյթ . շի-
թոց :

12. Իրօք բարկութի՞նը կը խայքէ: — Ոչ,
այլ խայթոցը:

13. Ի՞նչպէս կ'ըլլայ որ մեղուներուն
անգթութիւնը աւելի չարիք կը հասցնէ ի-
րենց քան այլոց: — Որովհետև իրենց
խայթոցը կը ձգեն խայթուածին մէջ, և
այս՝ իրենց մահ կը պատճառէ:

14. Ի՞նչ է բարեմասնուրեան հականիշը:
— Թերութիւն:

Ա. Ա. Ր. Ժ. Ք.

Ա.

Տեսակէն երթալ դէպ ի սեռն:

1. Ծառ . — տունկ
2. Օրօրոց . — անկողին .
3. Բոյն . — բնակարան .
4. Ծիծառն . — բռչուն .
5. Տասնապետ . — զինուոր .
6. Քահանայ . — եկեղեցական .
7. Շագանակ . — միրգ .
8. Մակելլան . — նաւապետ .
9. Ձանձ . — միջաս .
10. Եղբայր . — ազգական .
11. Սերկնելի . — ծառ .
12. Հովիր . — պահապան .
13. Վարդ . — ծաղիկ .
14. Պատուհան . — բացուածք . ծերպ-

թ.

Հնդլայնել՝ ըսելով արդիւնքը կամ հե-
տեւութիւնը:

1. Երկրագործը կը ցանէ իւր ցորեանը
..... որ կ'աճի . փոքրիկ ծիլեր հողէն
դուրս կ'արձակուին . ընդհուպ արար կը
նմանի մարդի մը . տակաւ ցողունները կը
բարձրանան . հասկերը կ'երևան, և, յու-
լիսի մէջ կը հակեն իրենց գլուխները ըն-
ծայելու համար երկրագործին իւր աշխա-
տութեան վարձքը:

2. Հողեփեռնէս բնաւ կասկած մը չու-
նեցաւ Յուդիթէն,
..... արեւալ վիճակի մէջ քնացաւ . բայց
կէս գիշերին արհասիրտն Յուդիթ՝ ար-
թլնցաւ, ելաւ առաւ զօրավարին սուրբ, և
անոր գլուխը կտրելով զայն Բետուղիա
տարաւ:

3. Մօր մը սէրը զարմանալի է .
— Տեսէք սա կինն որ երբեմն այնքան փա-
փուկ էր . մայր մ'է նա . այն օրէն յորում
մայրական պատակը զարդարեց իւր ճակառը,
կարի տաժանելի աշխատութիւնք իսկ հա-
ճելի են իրեն համար : Քանին անդամ ի գի-
շերի կ'ընդհատէ իւր քունը գոհացնելու

համար պէտքերն իւր փոքրիկ արարածին որ կը կոչէ զինքն իւր ճիշերավն . ցերեկը նոյնպէս մեծ են իւր հոդերն . իւր սրտին ու մարմարյն մէջ արխութիւն մը և կորով մը կ'զգայ : Մայրը աշխարհին վրայ երկնային նախախնամութեան իսկատիալ պատկերն է :

Հետեւալ առածներուն իմաստը բացատրել :

1. Ագահէն բան ուզելը , ջուրի մէջ ծակ փորել է :

— Ագահէն բան ուզելը անօդուտ աշխատութիւն մ'է :

2. Ագռաւին ընկեր եղողը , աղբիւմ գուրա ելլելու չէ :

— Զարին հետ ընկերացողը պէտք է որ չարագործ ըլլայ :

3. Ա՛խ տանձ մը իյնար՝ կոթը վեր :

— Ծոյլերը ամէն ինչ պատրաստ և դիւրին գտնել կը փափագին :

4. Ականջիդ ող ըլլան բաածներս :

— Բաածներս միշտ միտք պահես :

Միշրէն ԱՄԲԱՆԱԶ

Փոշին ելեալ ծառացեալ¹² և դիղացեալ
յերկին կըցէր ,

Զտիեղերս ծածկէր յաշաց , զերանգս¹³ ի մի
թաժաւէր թոյր¹⁴ :

Չէր յատին կալ կանգուն եւ յաղթանդամ
ոկայից անգամ .

Այր ի վրանը իւր անկառ՝ զապաւանդակ-
ուրն¹⁵ պընդելով :

Հօտք հօրանք¹⁶ անդեայք¹⁷ խուճապ¹⁸ խիտ
բառաչմամբ իջեալ ի դիւր¹⁹ ,

Ի հոմիսս ի խորշ տեղիս մակաղէին²⁰ կուռ
առ միմեամբք²¹ .

Բիւր ի լերանց արձագանգք խօսին ազգի
ազգի ձայնիւք :

Իրեւ վայր մի լըռութիւն գայր փոթոր-
կին ասպաւակայց²² ,

Որոստյր անդրէն երկին բոցաշաւիզ փայ-
լատակմամբք ,

Եւ շառաչք²³ անձրեւաց անկան յերկիր տե-
ղատարափ ,

Մորնչեցին ամենայն ծործորք եմակբ²⁴
ձորք եւ խոխոմք²⁵ :

Անձրեւաց ձայնք ընդ երեկո եւ ամպո-
րոտ լըռեն բարբառք²⁶ ,

Լըսելի միայն գոչէր սահանահոս ուղիսից²⁷
խոխոմք²⁸ :

Եւ ի մայրն արեգականըն խոնարհել²⁹
հերձոտեալ³⁰ ամպք

Սրկանեն շաղ մանրացօղ քաղցրածաւալ
արփւոյն³¹ շողիւք :

Եկն հիւսիս ի ծագաց երկինից դըլլոյն Ա. յ-
լարատայ ,

Պորզեցան երկինից երեսք ի հեշտ արե ե-
րեկորին³² ,

Քըրքմագոյն ներկան³³ տամուկ³⁴ լերինք
հովիտք դաշտք և անտառք :

Լուսածին շիթք ցողաւորք ի սազարթուց³⁵
կաթեալ ծառոց

Երփն երփւն³⁶ փայլ ծիրանի հարկանէին
յարեւուն ծայրս³⁷ ,

Հաւք ի ձայնըս խաննուածոյս³⁸ գեղ գեղ
հանեալ նըւագս յոստոց :

Բղթաւուտատ հընչեցուցին յողջոյն յետին
լուսոյ տուընչեան .

Գիշեր ըգքող իւր ոըփաւեաց ըգկապուտակն
սատղանըկար ,

Արկից բոցք ջահէին³⁹ ի կաձառեալ յօրին-
ուածոց⁴⁰ :

(Հայկ Դրուադ Զ. 481—214)

Հ. Ա. Կ. ԲԱԳՐԱՏՅԱՆԻ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԸՆԹԱՑՔ

ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒ

ՓՈԹՈՐԻԿԻ ԵՒ ՀԱՆԴԱՐՏՈՒԹԻՒՆ

Մըթացան երկինք , և հողմք չորից ծա-
գաց սսաեան ի կոիւտ ,

Քարանձաւք հեծէին , ճարճատէին² լերանց
մայրիք ,

Եւ անդունդք վասոււրական ամեհարաբ
գազանացեալ

Գոչէր վիշապածոյն , և մինչ ի գլուխըս
պարեխասց⁴

Իրեւ զունդ³ յարդի մզեղեալ⁵ հոսեալ⁶
զիրիփուր ծովուն սրըսկէր⁸ :

Գոռաց երկինք որոտիք⁹ ի ծոց ամսոց տ-
հագնացայտ ,

Եւ ճայթումունք¹⁰ փայլատականց ծագաց
մինչեւ ի ծագս երկինից

Պատառեալ զսոր աղջամուղջ¹¹ խաւարին
դաշըս շացուցին :

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՑ

1. Առեան ի կոիր. յարձակեցան կռուելու։ 2. Ճարհասել. ձայն հանել խորտակման։ 3. Ամեհաբար. կատաղի կերպով։ 4. Պարեխ. ժայռ։ 5. Ունգ. յարդի շիւղ. 6. Մղեղիլ. փոշի դարձնել։ 7. Հոսել. հովուն տալ, ցրուել. 8. Սրսկել. ցրուել. նետել. թափել. 9. Ռուն. տմակերու գոռումք. 10. ձայրումն. սաստիկ ձայթումն և ցայտումն. 11. Աղջամուղ. մթութիւն. 12. Խառանալ. ծառի պէս բարձրանալ. 13. Երանգ. գոյն. 14. Թոյր. գոյն. Զերանզ ի մի բարաւեր բոյր. բոլոր գոյները մէկ գոյնի կը փոխեր. 15. Աղջաւանդակ. գրքանի չուան. Այր ի փան իւր անկաւ՝ զապաւանդակն պնդելով. մարդիկ իրենց վրանները ապաւինեցան չուանները զօրացնելով։ 16. Հօրան. այծերու եւ ուլերու խումբ. 17. Անիեայ. արջառոց խումբ. 18. Խունապ. տագնապ կամ փախուստ. 19. Դիւր. դաշտ. 20. Մակաղել. հանգչել (ռշարաց). 21. Կուռ առ միմեամբ իփս առ իփս, իրարու քով. 22. Իրեն վայր մի լուռիւն գայր փորովին ասպատակաց. երրոր պահ մը դադրցան փոխօրդին ասպատակութիւնները. 23. Շառաշ. կյալու կամ հոսելու ձայն. 24. Եմակ. լրանց մէջ անարք տեղ. 25. Խոխում. ջրու հովիտ. 26. Ամսորու բարբառ. ամպերու գոռալու ձայներն. 27. Սահանանու ուղիս. սահանքի պէս, արագութ եւամբ վազող ջուր. 28. Խոխուց. ջուրի ձայն. 29. Ի մայրն խոնարհել. մարը մանել (արեւու). 30. Հերձուսեալ. պատուած, ճեղքուած. 31. Արփի արփ. 32. Երեկորին. երեկոյեան. 33. Ներկան ներկուեցան. 34. Տամուկ. թաց. 35. Սաղարթ. տերեւ. Երին հարցանել. գոնզգոյն փայլիլ. 37. Ծայրէ ճառագոյթ. 38. Զայն խառնուածոյ նորդաջակ ձայն. 39. Զսին. վառիլ, փայլիլ. 40. Կանառեալ յօրին ուածք. համախմբեալ վայելուչ կարդ (աստեղց)։

ՄԻՀՐԱՆ ԱՍՔԱՆԱԶ



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԴՊՐՈՒԹԵԱՆ

(Չար. Տես թիւ 2)

Լեզուներն այլւայլ խումբերու բաժնելու պատճառն այս է. Գիտունք տեսնելով թէ լեզուներէն ոմանք, ի մասին քերականութեան և բառից, ունին նմանութիւն, տարբերութիւններն կը ծագին ընդհանրապէս նշանագիրներու կանոնաւոր փոփոխմանէ, հետեւցուցած են թէ այս օրինակ նման լեզուք են մի և նոյն մօրէ, ուստի և համամայր և միմեանց ազգակից. ասսի են « մայր » և « դուստր » լեզու յորջածմունք։

Աղջականութիւն լեզուաց կը մեկնուի այսուէս. կը կարծուի թէ երկրիս այլւայլ կողմերը շատ հին ժամանակներ եղան մայր ցեղեր որոց իւրաքանչիւրն ունէր դիւր լե-

զու։ Այս մայր ցեղերէն հետզհետէ բաժնուելով այլւայլ խումբեր պէս պէս պատճառներով՝ գաղթեցին իւրաքանչիւր հեռաւոր տեղեր այն սկզբնական մայր լեզուաւ։ Իւրաքանչիւր գաղթականութեան լեզուն յետոյ տակաւ զարգանալով ներքուստ և արտաքուստ ի հարկէ և ըստ պիտոյից՝ եղաւ ուրոյն բարբառ, առանց ի սպառ կորուսանելոյ իւր նախնի միութեան նշաններն։

Այս մեկնութիւնն ունի բաւական հուանականութիւն, բայց ոչ բացարձակ ստուգութիւն։ Այլ ոմանք ի գիտնոց աւելի առաջ երթալով կը խնդրեն թէ այն նախնի մայր լեզուներն, ինչպէս նաև առհասարակ մարդկային բարբառն կամ յօդաւոր լեզուն, ինչպէս կազմուեցան։ Այս է լեզուի ծագման խնդիրն որ պատճառ տուած է այլեւ այլ կարծեաց ի մէջ լեզուաբանից։ (Զայսմանէ տես Զապարովսքի « Ծագումն լեզուի. » Origine du langage.)

Վերոյիշեալ մեկնութիւնն, ինչպէսըսինք, ունի բաւական հաւանականութիւն, բայց չէ բացարձակ ճշմարիտ, ուստի և ունի բացառութիւն։ Ճշդագոյն քննութիւններէ տեսն ւած է որ այս ինչ խմբէ, զորօրինակ հնտեւրոպական խմբէն, կարծուած լեզուներէն ոչ ամենուն նմանութեան պատճառն է այն լեզուն խօսող ազգին սերելը միևնոյն հին ցեղէ։ Բոլորովին տարբեր ցեղի, զորօրինակ ի բնէ Դուրանականին վերաբերեալ լեզու մը կը տեսնուի իւր հին ձեւին վրայ առած շատ բան Հնտեւրոպական լեզուներէ, մինչեւ թուել լինել այն խմբէն։ բայց Դուրանական լեզուի տարբերք որ տւելի կամ նուազ յայտնի կը նշմարուին ի նմա՝ կուտան բաւական հաւանականութիւն թէ ծագումն նորա է բուն Դուրանական։ Այսուէս նորագոյն լեզուաբաններէն ոմանք կը կարծեն թէ արդի Եւրոպական նոր ազգաց լեզուներն, ինչպէս նաև ցեղերն, էին ի բնէ Դուրանական, և յետոյ ուրեմն առին փոքր ի շատէ Հնդիկ-Եւրոպական ձեւ։

Լեզուաց այլւայլ խումբերու բաժանման, և այն լեզուները խօսող ազգաց բնակութեան վրայ պատճական աեղեկութիւններէ հայերէնի համար կը հետեւի թէ, Հայ ցեղն, էին անուամբ Արարատեան, ապա Արմենի կամ Արմէն, անյիշատակ ժամանակներէ բնակելով Եւրաքանչիւրն ունէր դիւր լե-

դրացի երեք գլխաւոր ցեղ լեզուները խօսող ազգեր . յարևելից և յարեմտից Հնդիկ եւրոպականներ (Պարսք և Յոյնք), ի հարաւոյ՝ Սեմականներ (Ասորիք), ի հիւսիսայ՝ Դուրանեան ցեղեր . Այսպէս լեզուաբանական տարբեր տարբեր տարբեր ունենալով ինքեանց դրացի, Հայք հարկաւ մեծ ազդեցութիւն կրած են ի նոցանէ քաղաքակրթութեան ինչպէս ուրիշ մասերուն, նոյնպէս մանաւանդ լեզուի կողմանէ, ըստ աւելի կամ նուազ յառաջադիմութեան այն ազգաց . եւ որովհետեւ աւելի յառաջադիմուն էին Արիք և Յոյնք, հարկաւ այս երկու ազգաց լեզուներն մանաւանդ կրնային գործել մեծ ազդեցութիւն Հայերէնի վրայ, և է իսկ այնպէս, որպէս ցուցանէ մըտադիր քննութիւնն :

Եւրոպացի լեզուագէտք ի սկզբան նայելով մեր անհարթ սամկօրէնին, և գտնելով զայն խճողեալ թուրքերէն բառերով և ձեւերով, կարծեցին իրեւ բիրտ գուառարարառ թուրքերէնի, Դուրանական լամբէ . Յետոյ քննելով հին լեզուն կամ գրաբարը, և գտնելով ի նման մեծ նմանութիւն Հնդիկ-եւրոպական լեզուաց հետ, վճռեցին թէ Հայերէնն ևս է արիական լեզուաց դասէն, այսինքն՝ ի բնէ դուստր այն մայր լեզուին որոյ ծնունդ են Զանդիկն, Յոյնն և Լատին :

Հայերէնն ունի այնչափ նմանութիւն, առաւելապէս ձայնի կամ բառերու կողմանէ Հնտեւրոպական լեզուաց, մանաւանդ դլխաւորներուն, Զենդի կամ հին պարկերէնի, Յունարէնի և Լատիներէնի, որ, եթէ չէր ևս ի բնէ Հնդիկ-եւրոպական, ըստ վերջին ձեռյա իւրոյ կ'երեւի Հնտեւրոպական, և առաւել քան որչափ կարծած են այս լեզուն լեզուաբանական օրինօք քննող համագի և օտար գիտունք : Սակայն լեզուի նմանութենէն Հնետեւիր ծագման կամ ցեղական միութիւնն . ուստի նայելով Հայերէնի նմանութեան Հնտեւրոպական լեզուաց հետ, չենք կրնար համարձակիլ ըսելթէ այս լեզուն էր ի բնէ Հնդիկ-եւրոպական կամ Արիական : Եթէ, ինչպէս արդի հնագէտներէն ումանք կը կարծէն, Հայ ազգին ծագումն է դուրանական, կամ ուրիշ բառերով ըսենք, եթէ Հայ, կամ հին անուամբ Արարատեան ցեղն . էր ի բնէ հիւսիսային ժողովուրդ, չէ անհաւանական թէ

լեզուն ևս էր նախապէս հիւսիսային դուրանական անհարթ բարբառ, որ յետ ժամանակաց ազդեցութեամբ լեզուաց դրացի հնտեւրոպական աւելի քաղաքակրթիրթ ազգաց, առաւ տակաւ հնտեւրոպական ձեւ :

(Տարունակելի)

Ա. Մ ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

→→→ՃԵՎԵՐ

Փ Ե Լ Ի Ս Ո Ւ Փ Ա Յ Ո Ւ Թ Ի Ւ Ն

ՀՈԴԵԲԱՆՈՒԹԻՒՆ (1)

(Պէտքէրեան վարժարանի մէջ աւանդեալ դասուց անփոփումն) :

Գ.Ս.Բ. (Չար. եւ վերջ)

ԻՄԱՅԱԿԱՆ ԿԱՐՈՂՋԱԹԻՒՅՆ . — ԱՐՏԱՔԻՆ ԸՄԲՈԽՈՒՄՆ .

Նախանձան ևս սուցական բմբանաւեն . — Այն ամէն ծանօթութիւննեք զորս մեք զգայարանաց որ և է միոյն միջոցաւ կ'ստանամք արտաքին աշխարհի վրայ՝ միշտ ուզգակի արդիւնքը չեն նոյն զգայարանին տպաւորման : Մեր իմացական այլ կարողութիւնք ըմբռնման կարողութեան հետ ի միասին կը գործէն . մարդ յիշողութեան, բազդատութեան, խելամութեան միջոցաւ զանազան զգայարանաց հազորդած և զանազան ժամանակաց մէջ ստացուած ծանօթութիւննեք մերձեցնելով, բարդելով, ընդհանրացնելով, իւրաքանչիւր զգայարանի ըմբռնման դաշտը կ'ընդլայնէ և այնու կ'ստանայ այնպիսի ծանօթութիւններ գրսնա, առանձին մնացած, անկախական այլ զգայարաններէ և մոտաւոր գործող աթիւններէ, չպիտի կարէր տալ իրեն : Զորօրինակ, օստար մարմնոց ըմբռնումը կ'ենթագրէ մեր մարմնոյն կանխագոյն ըմբռնումը, և ընդդիմակացութեան ըմբռնումը կ'ենթագրէ դնդերային ճգան ըմբռնումն ի ձեռն ներքին զգայարանին . ձեռքով մարմնոյ մը տարածութիւնը և ձեռ ըմբռնելու համար հարկ է յիշողութեան միջոցաւ պահել մեր ձեռքին տակէն ոնցած նախորդ կէտերուն ծանօթութիւնն : Աչքն ինքնին միայն գունաւոր տարածութիւն մը կ'որոշէ և ամէն ինչ կը տեսնէ մի միակ մակարդի վրայ՝ չունենալով ինքնին հեռաւորութեան

(1) Տես թէւ 1, 2, 3 :

և խորութեան գաղափար և ոչ իրտիան մեծութեան, գլան մ'աչաց համար մակարդակի մ'է սահմանափակեալ երկու զրգահետական գծերու մէջ, որոց ծայրերը երկու կոր գծերով միացեալ են. կոն մ'եռանկիւն մ'է որոյ խարիսխն է բոլորակաձեւ: Դիտուած է որ գործողութենէ մը վերջ իրենց տեսութիւնն վերստացող կոյրեր զառաջինն չէին կարող առարկայից իրական հեռաւորութիւնքը գտատել, ամէն ինչ մէկ գծի վրայ իրենց առջին կանգնած կը կարծէին եւ կ'երկնչէին որ առարկայները իրենց աչքերը վիրաւորեն, ուստի և զգուշութեամբ եւ ձեռքերնին իրենց աչաց առջեւ վեր բռնած կը քայէին: Տղան ալ որ դեռ տեսանելեաց դաստիարակութիւնը չէ ըրած՝ հեռաւոր իրերը մօտ կը կարծէ և ձեռքը կը կարկառէ բռնելու զանոնք: Եթէ մեք աչօք կը դատեմք իրաց չափը, իրական ձեւը, համեմատական հեռաւորութիւնը, բնութիւնը, և այլն, պատճառն այն է որ փորձառութեամբ չօշափիան և այլ զգայարանաց ըմբռունումներն միացուցած եմք տեսուղութեան ըմբռնմանց հետ և խելամտած, որով վերջնոյն տուած ծանօթութիւնքն նշաններ եղած են մեզ համար իրաց չափ յառակութեանց: — Այսպէս է նաեւ լողութեան համար. ըստ ինքեան հնչական թըրթունմները միայն զգալի կ'ընէ մեզ, բայց լուսած ձայնէ մը կարող եմք բազում ինչ իմանալ: Ձայն մը կը լսեմ և կ'ըսեմթէ մօտակայ տունէ մը կուգայ, թէ հոն մէկը կայ, թէ այդ մէկը տղայ մ'է ըստ որում ձայնը քնքոյց է, թէ այդ տղան կը տառապի վասն զի ձայնը ողբագին է, և կը թուի ինձ տեսնել զայն և իւր ցաւով կը ծրկուած դէմքը, և այլն: Երբ կը լսեմք մէկը որ կը խօսի, ականջն լոկ ձայներ կը լսէ, բայց միտքն այդ ձայնին միջոցաւ կ'ստանաց բազմաթիւ գաղափարներ: Սոքա անշուշտուղակի լսողութեան զգայարանին արդիւնք չեն: Ուստի և հոգեբանք կը զանազաննեն նախական ըմբռնմունք (perceptions primitives) որք զգայարանաց յատուկ ու բնիկ ծանօթութիւնքն են, և Սացական ըմբռնմունք (perceptions acquises) զորս միմեամբք գաղափարակուելով և խորհրդածութեամբք զօրանալով կ'ընծայեն մեզ մեր ըզգայարանք:

Հիմայ կարող եմք համենաւ թէ ինչ կը

նշանակեն զգայարանաց մոլորութիւնն եւ ցընուք (erreurs et illusions des sens) ըսուածները: Զգայարանք ըստ ինքեան շեն խարեր զմեզ. նոքա կը հաղորդեն մեզ անփոփոխ իրենց ստացած ապաւորութիւնքն: Բայց մեր միաքն նոյա ըմբռնումները մեկնելու մէջ կը սիսալի երբ բաւական փորձութիւն և գիտութիւն չունի: Այսպէս գաւողան մը բեկեալ կ'երեկի երբ մէկ մասը ջրոյ մէջ մսուած է. քառակուսի աշտարակ մ'ի հեռուստ կը կ'երեկի: Երբ նաւով ծովու վրայ կը չըլինք՝ ծովեզրը կը թուի մեզ շարժիւ. հիւանդի մը սրունքը կտրուելէ յետոյ՝ նա դեռ կը կարծէ զգալ իւր սրունքը, և այլն: Ոչ թէ տեսութիւնը կամներքին զգայարանն է որ կը սիսալի աստ, եթէ ինչ որ կ'երեկի իրական համարիմք, այլ մեր խելամուռթեան մէջ մեք կը սիսալիմք ի չգոյէ բաւական փորձի և սովորութեան:

14. Թէ ի՞նչ կ'ուսուցան: մեզ արտաքին քմբռնումն մարմնոց մասին. — Արտաքին ըմբռնումն, ըսինք. կը ճանչցնէ մեզ նիւթին և անոր յատկութիւնները, բայց պէտք է գիտնալ թէ այդ ծանօթութիւնը կը կայանայ միայն գիտնալու մէջ թէ կան մեզէ գուրս բաներ, առարկայներ և թէ նոքա մեր գործարանաց վրայ յառաջ կը բերեն այս ինչ կամ այն տպաւորութիւնքն, ձայնի, գոյնի, համի, հոտի և լն: Մեր զգայարանք ոչինչ կ'ուսուցանեն մեզ մարմնոց ներքին կազմութեան և նիւթոյն բնութեան վրայ: Ինչ որ մարմնոց յատկութիւնքը կը կոչեմք՝ գիտակական վիճակներ են ի մեզ որ յառաջ կուգան առթիւ առարկայից համան մեր զգայարանաց: Մեր կրած արպաւորութիւնք արդի՞ւնք են համապատասխան յատկութեանց որք գտնուին նիւթոյն մէջ. մեզ ջերմութիւն ազդող իրը ջերմութեան յատկութիւն մ'ունի իրօք: ձայնը՝ զոր կը լսեմք՝ զայն մեր ականջին յղող առարկային մէջ կայ իրօք իրբեւ նորա մէկ հանգամանքն գոյն, համ, հոտ առարկայից ներքին յատկութիւնքն են անկախապէս մեր զգայարաններէն. — ընդերկար այսպէս հաւատացին մարդիկ, բայց գիտութիւնն այս կարծիքը կը մերժէ այսօր: Աւանց մորթի ոչ տաքի, ոչ ցուրտի զգացում ու գաղտիար պիտի լինէր. եթէ ականջ չլինէր, ձայն անտարակոյս չպիտի լինէր տիեզերաց մէջ: Եթէ տարբեր զգայարաններ ունենայինք,

մարմնոց մէջ տարբեր յատկութիւններ պիտի գտնէինք՝ առանց մարմնոց ներքին եւ խսկական բնութիւնն զոխուելու : Արտաքին աշխարհի հետ մեր զգայարանաց միջոցաւ կը հաղորդակցինք եւ սոցա կազմութեան և զանազանութեան համեմատ է որ մեր ըմբռնմունք մարմնոց վրայ կը կազմին ու կը զանազանին . եթէ ոչ ըստ ինքեան, անկախարար ի մեր զգայարանաց, չեմք գիտեր ու միջոց խոկ չունիմք գիտնալու թէ ինչ են իրաց խսկական հանգամանք :

Ուրեմն կարելի՞ է տարակուսիլ խոկ րնաւթէ նիւթը գոյութիւն ունենայ, ինչպէս ըրաւ անգիտացի խմաստասէր եալիսկոպոսն Պէրքըլէյ որ մատածութիւնը միայն սոտոյգ և իրական դրաւ և ամէն ինչ անոր վիճակներն համարեց : Այս վարդապետութիւն բացարձակ խտէականութիւն ըսուածըն է և ծայրայեղ է, հետեւապէս ոչ ճշմարիտ : Նիւթ, մարմիններ, արտաքին աշխարհ մը կայ անշուշտ . կոյ բան մը որ մեզ կ'ընդիդմանայ, որ մեր շարժ ումը կ'ար գիլէ, որ կը շարժի առանց մեր կամքէն ընդունելու մղումը, բայց թէ ինչ է այդ իրօք, և ինչ են իւր էական յատկութիւնք. զայդ չգիտենք և չպիտի գիտնամք անշուշտ վասն զի, որպէս ըսած է Արխատոտէլ, զգացողութիւնը (այսինքն ըմբռնումը) զգացող ենթակային և զգացեալ առարկային գործակցութեան արդիւնքն է, և հետեւապէս չի համապատասխաներ իրաց ծշմարիտ յատկութեանց : Փորձը կը ցուցինք որ միւնոյն աղգակը (զոր օրինակ, ելեկաըրական հոսանք մը, ձնշում մը . թմբեցուցիչ մը) տարբեր գործարանաց վրայ գործելով տարբեր տպաւորութիւններ յառաջ կը բերէ, զոյն՝ եթէ աչքին վրայ, ձայն՝ եթէ ականջին, համ՝ եթէ լեզուին վրայ ներգործէ : Միւս կողմանէ տարբեր աղգակներ միւնոյն զգայարանաց վրայ ներգործելով միշտ միւնոյն տպաւորութիւնը յառաջ պիտի բերեն : Այս յայտնի կը ցուցինք թէ մեր կրած աղգեցութեանց զանազանման պատճառն զգայարանաց զանազանումն է : Արդէն այժմեան բնագիտութիւնն զհետ է հաստատել բնական գօրութեանց նոյնութիւնը և ոչ մի բնագիտ կը վարանի ընդունիլ այսօր ամենուն տլ, ջերմութեան, ըլւոյ, ելեկորականութեան, մագնիսականութեան, քիմիական խնամութեանց,

ծանրութեան, առ հասարակ վերածուիլն թրթւմանց, լուծուիլն շարժման գաղափարին մէջ : Արտաքին աշխարհն ուրեմն չէ ինչ որ մեզ կը ցուցնեն մեր զգայարանք . սակայն — ըսինք արդէն — նախ կարելի չէ մեզ նորա գոյութիւնը մերժել, և յեայ հնարին և օրինաւոր է գիտութիւնը, վասն զի, թէպէտ իրաց յատկութիւնք գիտակախան վիճակներ են ի մեզ, կայ անփոփոխ անշեղիլի կարգ մը որով առարկայք կը վարին մեզ հետ և որով միմեանց վրայ կը ներգործեն . և այս հաստատուն առնչութեանց կապն խոկ է գիտութեան առարկայն :

Ռ. Յ. ՊէրՊէրեԱն



ԶԱՆԱՉԱՆՔ

Բ. Ա. Ռ. Ա. Ք Ն Ա Ա Կ Ա Ն

(Եար. Տես թիւ 2)

« Եւ ընդ այն զի՞նչ զարմանալի իցէ, ուր զի և առ Տիմոթէոս գըէ՝ եթէ Զքո անձն սուրբ պահէլ » Ուկեր . Կողոս . Հ. Էջ 614: Կարդա « զի՞նչ զարմանալ իցէ » :

« Քանզի մէք հօր սրբոյ և յասկի նախանձուէ գիտեցաք » . Սերեր . Ե . Էջ 88: Կարդա « յասկի ի նախանձուէ » :

« Հրամայեցու հրապարակօֆ (հրապարակաւէ) քարոզ կարդալ թէ Գոշթազդ ոչ եթէ զիսորհուրդ ինչ արքունի ի վեր եհան, և ոչ թէ վասն սյլ ինչ յանցանաց մեռանի, այլ վասն քրիստոնէութեան » Վկ Շմաւնի եալիսկոպոսի : Սովերք Հայկ . ի Էջ 35: Կարդա հրապարակաւ . բարոզ բառի սկզբան ին վրիպակաւ կրկնուած է հրապարակաւի վերջը :

« Խոկ չնորհասուը Հոգւոյն լցեալ զիս, գիտութեանն էր աղբիւրացեալ զամենայն լսելեացն ցուլը ականջացն և սրտիցն երկրին » . Փ. Բիւզանդացի, Գ. Ժր . Էջ 30: Կարդա լսելեացն ցնցուլս : Տես և յեղեչէ մեկնութեանն Յեսուայ, Ժ. Էջ 175: « Հարկ է ընդ երկու ցնցուլս ականջաց ի ներքս մտանել, և ընդ ձայնական հնչումն ի սիրտն աղդել » :

« Զի պէտս օգտութեան հաստատեաց ըզ-

նոսա Սրարիչն» . Բրս . Վեց Ե . Էջ 90 : Կարդա զի ի պէտս , ինչպէս կը դնէ և Անտոնեան Հարց բնակիր օրինակին . — «Կէսքն վտառ երամ երամ շրջին , և կէսքն յիր և ցանի մէջ խորոց ծովուն իրրեւ մուլեկանս բանդագուշեալս յածեալս սահին» . անդ . Ե . Էջ 139 : Կարդա «յածեալ սահին» ինչպէս կը դնէ և Անտոնեան Հարց ընտիր օրինակին :

«Զի առ քաղաքօքն երկոքումիք և առ ամենայն նահանդաւն նոցունց քաղաքայ՝ անցանէր Ողոնոս գետ բազում յորդութեամբ ջուրց իւրաց . Եւս . Պատմ (Ս Ղաղար , 1877) Ե . ա . Էջ 322 : Ուզզելի Ռոդոնոս , գլ . Rhône րէն մոռցուած է նալիքնթաց անցանէր բային պատճառաւ իսկ յէջ 344 ուղիղ կը գրուի Ռոդոն . «Ընկեցին զնոսա ի Ռոդոն գետ որ անցանէր ընդայն» :

«Յեզեկիէլ գրեալ է՝ եթէ Սատակելոց էր Աստուած զտունկն առաջին իրբու ըդմարդիկ կարդատունկ , և զուարձացուցանէ զայլ մարդիկ՝ որ ի կոապաշուութեան աւերեալ և ցամաքեալ էին» . Եփր . Աւետ . (Ս Ղաղար , 1836) Էջ 290 : Նոր Հայկադեանն կ'ուզզէ արդատունկ .

«Զոր և ինքն իսկ առէ , եթէ և յետի նաքարակիտն խնդրեսցի» Յ . Մանդ . ձառք , ժԴ . Էջ 445 . Կարդա յետին :

«Բայց և հանգչին արդարեւ ըստ այս մարդարէութեան ոչ ամենեքին , այլ կատարեալքն յառաքինութեան ոգիք» :

Մ . Խորեն . Ս . դ . Կարդա «ըստ այս մարդարէութեան» . — «Ս.յլ ետ տեղի աղխիննորա և ուսմիկ ի կերակուր , փոփոխելով տեղի ի տեղւոջէ ցրովանդակ ամս» . անդ . Բ . ձա : Կարդա «տեղի ի տեղւոջէ» . ինչպէս ունին արդէն ուրիշ օրինակը :

«Յանզի և ոչ բարիդ առնելով դոցա՝ կարասցես զիս բարեկամս ստամալ , և ոչ չար ինչ առնելով սոկս այնորիկ թշնամի» . Պատմ . Ալեքս . Էջ 93 : Կարդա բարեկամ : Իսկ յէջ 5 «Կոռնոս սոփիսէս» գրուածն ուզզեալ է ովիտէս :

«Որպէս եղէք աստուածարար կենդանաց յուցիչ մեռելութեանս իմոյ , և յարուցեալ իմ ի միջի արարէք , կամիկ թէ զրովանդակ անձնո յարուցեալ էր , և ոչ զիէսո» . Զ . Փարպեցի , Պատմութիւն , Էջ 537 : Իմ աւելորդ է և յաջորդ ի միջին չփոթած :

«Նա փրփուր ի բերանոյն արձակիցէ . և սա լորձ նեխեալ ժահակոսութեամբ անընբերելեաւ լցեալ» . Ասկէր . ընդդէմ արբերութեան , ձառք , Էջ 125 : Կարդա լորձն :

ՆՈՐԱՅԻ ԲԻՒԶԱԿԱՑԻ

ԾԵՂԱՔԱԼ ՀԱՏՈՒՅԹՔ

ՏՊԵԿԻՆ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ ՈՒ ԵԱՆՐԱԲԱՐՈՅՈՒԹԻՒՆ

Բանահիւս մ'ըսաւ . «Մանկան ծիծաղը ծաղկի մը փթթիւն է : Բնդունելու ուրախութիւնն է , չնչելու ուրախութիւնն է , ծելու ուրախութիւնն է , նկատելու , ապրելու , ամելու ուրախութիւնն է : Տունկի մ'ուրախութիւնն է⁽¹⁾ » :

Բանահիւսը կրնար յարել թէ այս ուրախութիւնն որքան ամենուն հազորդակցական է : Պատանի ու ծերունի , մայր ու մեծ մոյր կը հրձուին սրտովին այս ծիծաղէն որ պահ մը կենաց հոգերը կը մոռցնէ : Զկայքան զայս զովասուն ցող մը : Այս խնդութիւնն արդէն հեռաւոր անցեալի մը վրայ բացուած պատուհան մ'է : Մարդ անոր մէջ իր առաջին տպաւորութեանց թարմութիւնը կը գանձի աղանձն է ի'նչ զոհողութիւններ պէտք են տղեկին այս անգին զուարթիւնն անվթար պահելու , և այսպէս սիրտ առնլով՝ իր ընելիք ճգունքն իրեն թեթև կ'երեւին արդէն :

Բայց թէ աւելի խոհական բնութիւն մը ունի , ծանրաբարսյութիւնը՝ որ երգեմն մանկական ծիծաղին կը յաջորդէ՝ նոյնչափ հրատարյը մը կ'ընծայէ :

Ծանրաբարսյ աղայ մը մտածող տղայ մ'է : Մրգէն մի շատ խնդիրներ կը լուսաբանին այս ուզեղին մէջ որ միայն զուարթ զգայութեանց ընդունակ կը համարուէր . արդէն իր անթարթ աչունքն իրերու խորը կը թափանցէն :

Երբեմն կարծես թէ տղեկը հեռուն կը նայի , համր կը միայ դիտողութեան առջեւ՝ թէ եւ այնքան բնական կերպով կը մտնէ մըտացը մէջ որքան ամսնի մը մէջ հոսող ջուրը :

(1) ՊանՏէլէր . ծիծաղին էու թիւնը :

Տղեկն իր ծաղիկ հասակին մէջ հաւաքած այս գիտողութիւններն իր կենաց ամենէն իրական գանձերն են: Ինչ որ այն ժամանակ կը տեսնէ, լաւ կը տեսնէ: գործարանացը մեծ գրգիռ մ'է: համարել զգացումներ որոց հունձքն առատ է: Վերջին վերլուծութեամբ և բանադատութեամբ զինեալ մարդն իր նախկին յիշատակները՝ որոց կարեղութիւն կ'ընծայէ, պիտի ջանայ ամրապնդել:

Բայց պէտք չէ տղեկի մը խորհրդածութիւնները վարել, զի նա թղթի կտորի մը, կենդանիի մը, հովին թուզող թերթի մը մէջ աշխարհ մը տեսնէ:

Այս անդիտակ յատկութիւնն որ անդոււ կը գործէ, անօգուտ է ուղղելու ջանաւթոյլ տանք որ բնութիւննը գործէ: ոչ նեցուկի և ոչ թարգմանի պէտք ունի:

Թարգ.

ՇԱՆՑԵԼՅՈՒԹԻ Մանկան

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ



ԲԱՐՈՅՑԱԿԱՆ ԱՌԱԾՔ

Տղիտութիւնն գիշեր է մոտաց, գիշեր առանց լուսնոյ և առանց առաեղաց:

Երեք ազգք են տղիտութեան. գիտել ոչ ինչ. գիտել չարաշար զոր գիտէն եւ գիտել այլ ինչ քան զայն զոր գիտելն պարտ է:

Որչափ գործս բարիս գործեմք յերիտասարդութեան մերում, այնչափ միսթարութիւնս պատրաստեմք վասն ծերութեան մերոյ:

Մի թողուր վաղուի զգործս բարիս զոր կարող ես գործել այսօր:

Բնշաւետագոյն ժառանգութիւնն զոր կարէ թողուր ոք որդւոց իւրոց՝ է համրտւ առաքինութեանց իւրոց եւ գործոց բարեաց:

Եթէ կամիս զի կատարեսցին գործք քոյ դու ինքնին երթիջիր անձամբ. և եթէ կամիս թէ մի կատարեսցին, առաքեա դայլ ոք:

Բնծ այսութիւն իմն է ընտելութիւն ոչ միայն սրտի բարւոյ, այլ եւ ուզիղ մտաց: Յառնէ դժնէ լոյս տայ ամենայն մարդ: զայր ընտել սիրէ իւրաքանչիւր ոք և պաշտօն իսկ մատուցանէ նմա:

Զիք ապահովագոյն միջնորդ յինքն յանկուցանելոյ զսէր այլոց քան տալ նոցա ըզսէր իւր: Մարդասիրութիւնն առաքինութիւն ինչ է որ քան զընչաւետութիւն առաւել ժողովէ բարեկամն առ իւրեւ և քան զիշմանութիւն առաւել յարգ և պատիւ հայթայթէ:

Մարդիկ լոկ որ մեծանձն են կարեն գիտել թէ՝ ի բարին լինել ո՞րչափ փառք են:

Մի դատեր զմարդ ըստ այնմ զոր այլք առեն զնմանէ, այլ դատեա ըստ այնմ զոր գու գիտես թէ գործեալ է:

Ոչ կարացեալ եւանել ի չափ բարձրութեան առն համեստի՝ առ ինքն իջուցանել զնա հնարի զրպարտիչն հանելով համբաւ չար զնմանէ: Զրպարտութիւնն նման է ածխոյ. եթէ չայրէ, սակայն սեւացուցանէ զքեզ:

Որ գիտէ զբարին և գործէ զչարն, նաև չէ տգէտ, այլ յիմար է:

Զիք ինչ յաշխարհի քաղցրագոյն քան զանդորրութիւնն խղճի մտաց:

Թարգմ.
Ի Գաղինակնե

ՏԲ. Գ. ՍԵԽԵԱՆ

ՎՐԻՊԱԿԻ Գ. ԹՈՒՈՅՆ ՄԷՋ

Եղ Սիւնակ Տող Վրիպակ	Ռւդիլ
37 Ա. 45 արիւն	աճիւն
40 Բ. 40 օգնութիւնն օրհնութիւնն	
42 Ա. 53 102 յէջ յէջ 102	
44 Ա. 38 ի միմեան ի միմեանց	

ԱՐԾՈՒԱՏԵՐ Ա. ՍԱՔԱՅԵԱՆ

ՏԵՐԵԿԱ-ԽՄԲԱԳԻՐ

ՄԻՀՐԱՅ ԱՄՔԱՆԱՋ

Տպագր. ՆԵԱՆ Կ ՊԵՐՊԵՐԵԱՆ
Ա. Պօլիս, Էսկի Զայրիկ ճամսէսի, 64: